

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ
(ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ)**

Ուժի մեջ է 2013թ. մայիսի 2-ից

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդներին մատուցվող բանկային երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների, ֆակտորինգի և ինկասո գործառնությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

3. ԻՆԿԱՍՈ ՊՈՐՇԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ	
3.1. Արտահանման ինկասո	
3.1.1. Ինկասո հանձնարարագրի թողարկում	0.2%` հաշվարկված ինկասոյի գումարից, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
3.1.2. Ինկասո հանձնարարագրի պայմանի փոփոխություն	15,000 ՀՀ դրամ (ինկասոյի գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կզանձվի 0.2%` հաշվարկված գումարի ավելացված մասից)
3.1.3. Ավալի միջոցով երաշխավորված մուրհակի զեղչում	25,000 ՀՀ դրամ (համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի կիրառում)
3.2. Ներմուծման ինկասո	
3.2.1. Ինկասո հանձնարարագրի ծանուցում	0.2%` հաշվարկված ինկասոյի գումարից, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
3.2.2. Ինկասո հանձնարարագրի պայմանի փոփոխության ծանուցում	15,000 ՀՀ դրամ (ինկասոյի գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կզանձվի 0.2%` հաշվարկված գումարի ավելացված մասից)
3.2.3. Ակցեպտավորված մուրհակի երաշխավորում	3 - 6% տարեկան` հաշվարկված մուրհակի գումարից, նվազագույնը 35,000 ՀՀ դրամ
3.2.3. Ինկասո ներկայացված, սակայն չվճարված փաստաթղթերի վերադարձ	35,000 ՀՀ դրամ